


ՈՂՋՈՅՆ ՍԻՐՈՅ ԵՒ ՀԱՒԱՏԱՐՍՈՒԹԵԱՆ

ԱՌ ՄԱՅՐ ԱԹՈՌՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ



Յանուար Երուսաղէմի Առաքելական Սուրբ Աթոռոյս և Սրբոց Յակոբեանց Միաբանութեան հոգեկան խորունկ հրճուանքով կ'ողջունենք Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ Կոնդակը ի մասին Ս. Էլմիածնի նորահաստատ տօնին և Սիմոնի ներկայ թիւը հաւատարմական ջերմ զգացումներով կը նուիրենք Մայր Աթոռու 1441ի Հայրենադարձի Յորելեանին:

Կը հաւատանք թէ Հայրապետական օրհնութեամբ նուիրագործուած Ս. Էլմիածնի այս տօնը կցուած մեր Տիրոջ հրաշափառ Համբարձման տօնին պիտի դառնայ զոհաբանական պաշտամունքի գերբըլանիկ առիթ մը և հոգևոր ներշնչութիւններու անսպառ աղբիւր մը Հայութեան ներկայ և ապագայ սերունդներուն համար:

Արդարև Մայր Աթոռոյ դարերու աստանդականութիւնը, իր բոլոր արդարացոցիչ պատճառներով և հանգամանքներով մեր Եկեղեցւոյ մեծագոյն դժբախտութիւններէն մին եղած է՝ նուիրապետական հիմնական շահերու և սկզբունքներու տեսակէտով, և եթէ անոր անկախութիւնն ու հարազատ նկարագիրը կըրցաւ ապահով մնալ երկարատև այդ դժբախտութեան ընթացքին պատճառը այն էր որ անիկայ վայելցց միշտ հայութեան անվերապահ հաւատարմութիւնը և իր սիրտը երբեք չբաժնեց Ս. Էլմիածնէն:

Էլմիածնասիրութիւնը իր և իր զաւակաց նուիրական ժառանգութիւնն էր օծուած Ս. Գրիգոր Լուսաւորչի հրաշալի տեսիլքով, այդ տեսիլքին սրբազան և յաւիտենական խորհուրդներով: Ինչպէս այդ տեսիլքը անբաժանելի էր Ս. Էլմիածնէն նոյնպէս ալ այդ սէրը: Եթէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մոռացի զիս ալ իմ, կցեսցի լեզու իմ ի քիմա իմ՝ եթէ ոչ յիշեցից զքեզ, թէ ոչ նախ նուազեցից զքեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ: Բարեկոնական գերութեան մէջ տուայտող Խորայելի հաւատարմիմ զաւակաց այդ բուն զգացումներով կը տրուէր քրիստոնեայ հայութեան սիրտը Ս. Էլմիածնի հաւար, մանաւանդ անոր որբութեան հազար տարիներու շրջանին, ճիշդ նոյն հոգևոր պատճառներով: Հայութեան ուրախութեան սկիզբն ալ Ս. Էլմիածնին էր եղած: Աստուծոյ Միածին Որդին, քրիստոնէական հաւատքի և Եկեղեցւոյ Հիմնադիրն ու Գլուխը անձամբ հոն իջած էր և հոն հաստատած Հայաստանեայց Եկեղեցւոյ Մայր Տաճարը, Մայր Կայանը իր լոյսին իր աստուածային և երկնային շնորհաց: Հոն այդ լոյսին և շնորհաց մէջ կազմաւորուած էր հայ նուիրապետութեան նկարագիրը: Այն եղած էր ձուլարանը իր ոսկեդարեան սրբազան և անկորնչելի արժէքներուն: Հոն դարբնուած էր վարդանանց ոգին, ոգին Հայ ժողովուրդի ճշմարիտ կրօնասիրութեան, ազգասիրութեան և հայրենասիր-

բուժեան, որով ան կրցած էր իր վրայ խուժող աղէտներէն դուրս գալ և վերածնիլ նոր կենսունակութեամբ։ Ոչ մէկ նիւթական ոյժ, բռնութիւն, հարկադրանք, ոչ ժամանակի երկարութիւնները և ոչ ալ միջոցներու հեռաւորութիւնները պիտի կրնային բաժնիլ հայութեան սիրտը իր հոգևոր և իմացական արժէքներու գանձարանէն — Ս. Էջմիածնէն։

Մայր Աթոռոյ աստանդականութիւնը հետեւաբար հայութեան սրտովը եղած եղելութիւն մը չէր կրնար ըլլալ։ Եղաւ մին այն խաչերէն զոր այդ մեծ սիրտը կրած է դարերու մէջէն ի սէր իր ազգային շահերուն։ Հանդուրժեց հարկադրանքի տակ եղած այդ աստանդականութիւնը որչափ ատեն որ անոր զլիւսուոր նպատակը հայրենիքի քաղաքական անկախութեան մականը քրիստոնէական կրօնի սրբութեան և ուղղափառութեան մէջ պահպանելն էր, այլաւօր և հակաքրիստոնէական ազդեցութիւններէն զերծ պահելն էր։ Երբ այդ մականը իր Տաւրոսեան վերջին կայանին մէջ բռնութեան վայրագ ուժերու ձեռքով խլուեցաւ, այդ հանդուրժանքը վերջ գտաւ և Մայր Աթոռի հայրենադարձը հրամայական դարձաւ։

Թէ հայութեան հոգեկան տառապանքը այդ հանդուրժողութեան մէջ որչափ ծանր եղած էր, կը տեսնուի ազգային այն մեծ և տօնելի խանդավառութեան մէջ որ ի հանդէս բերուեցաւ 1441ի այդ հայրենադարձին առթիւ։ Ընդհանուր էր այդ խանդավառութիւնը հոգեւորականներու և աշխարհականներու մէջ հաւասարապէս և կըլ տարածուէր Սիւնեաց աշխարհէն մինչեւ Ռուբինեանց աշխարհը։ Ազգային-եկեղեցական այն ժողովը որ յետոյ զուամարտեցաւ Ս. Էջմիածնի մէջ նոր կաթողիկոսի ընտրութեան համար նոյն հաւատարմական զգացումներով կատարեց իր աշխատանքները։ Ուշագրաւ է սիրոյ և համերաշխութեան այն ոգին որ կ'իշխէր երեք հարիւրէ աւելի պատգամաւորներու մէջ ինչպէս նաեւ այն հազարաւոր վանականներու և եկեղեցականներու մէջ որոնք ժողովուրդի մեծ բազմութիւններով հաւաքուած էին Վաղարշապատ, ականատես ըլլալու կաթողիկոսական ձեռնադրութեան, օծման և զահակալութեան հանդիսութեանց։ Ընտրութիւնը կատարուեցաւ կոստանական ճշգրտութեամբ և աւանդական կարգաւորութեամբ և ընդհանուրի համերաշխ հաւանութեամբ կաթողիկոս հուշակուեցաւ Կիրակոս Վիրապեցին, քրիստոնէական առաքինութիւններով և սրբակեաց կեանքով զովաբանուած Վաղարշականցի վանականը։ Ձեռնադրութեան, օծման և զահակալութեան արարողութիւնները տեղի ունեցան տասներկու եպիսկոպոսներու ձեռքով և նախագահութեամբ, աննախընթաց շքեղութեամբ և Ազգայնորդի Հայրապետը ընդունեց Եկեղեցւոյ և Ազգին միահամուռ հաւատարմութիւնն ու հպատակութիւնը։ Յետագայ նոր դժբախտութիւնները չեն կրնար մոռցնել տալ այս յիշատակելի դէպքերը, որոնք պատիւ կը բերեն Ժե. դարու Հայ ժողովուրդին և կղերականութեան և կը վկայեն թէ ԺԱ-ԺԵ. դարերու ընթացքին անոնց մղած պայքարներու ոգին զուտ քրիստոնէական և աւետարանական էր։ Այդ պայքարը պիտի շարունակուէր և Կիրակոս Հայրապետ մարտիրոսաբար դիմաւորեց այն բոլոր տառապանքները, որոնք իր բաժինը եղան մինչև իր կեանքին վախճանը, հաւատարիմ մնալով իր իտէալին և նկարագրին, որ իտէալն ու նկարագիրն էր Հայ վանականութեան։ Մայր Աթոռոյ հայրենադարձի տօնը պիտի յիշեցնէ ամէն անգամ ոչ միայն 1441ի դէպքերը այլ և պիտի

պանծացնէ Հայութեան էլ միաճնասիրութիւնը իբրև տեսիլքը անոր դարերու անաստոն հաւատքին և զործադրութիւնը Աստուծոյ կամքին։ Աթոռի փոխադրութեան պատմութիւնը Գուինէն մինչև Սիւս, ցոյց տուած էր թէ Ս. էլ միածինն էր Հայաստանեայց Մայր Աթոռոյ ի վերուստ սահմանեալ յաւիտենական կայանը։ Վասնզի մինչդեռ միւս բոլոր կայանները ոչ ևս էին իրենց անցաւոր փառքերով, էլ միածինը կար ու կը մնար անխախտ իր հոգևոր ու անանց փառքերով։

Վեհափառ Հայրապետը իր կոնդակին մէջ ողբալով այդ անցաւոր փառքերուն ու անոնց ընկերացող ապետներուն վրայ կ'օրհնէ Հայութեան էլ միածնասիրութիւնն ու հաւատարմութիւնը և կը պատկէ զանոնք տօնակատարութեան տնօրինութեամբ։ Կը շեշտէ Հայաստանեայց Եկեղեցւոյ քրազգան արժէքները և կը փափաքի որ իր գաւազանը ուշադրութիւնն ու սէրը միշտ կեդրոնացած մնայ անոնց վրայ և մշտաբար գիտակցութեամբ նուիրուին անոնց պահպանման յառաջդիմութեան և բարձրացման։ Ն. Ս. Օծութեան Հայրական սիրտն է որ կը խօսի և վստահ ենք թէ անոր ձայնը պիտի արձագանգէ իր բոլոր գաւազանք սիրտերուն մէջ և անոնք իրենց հայրերու հայրենասիրութեամբ և եկեղեցասիրութեամբ ուխտեն պիտի հաւատարիմ մնալ իրենց պանծալի Հայրենիքի և Եկեղեցւոյ գերագոյն շահերուն, իրենց պատմութեան յուսալից և բախտորոշ այս փրկուած մանաւանդ երբ այդ Հայրենիքը շնորհիւ իր իմաստուն և հանձարեղ ղեկավարներուն իր հրատապ վերելքը կը կատարէ ընկերային, տնտեսական և մշակոյթի բոլոր մարզերուն մէջ յարատև, հաստատուն և յուսալից քայլերով, և երբ Եկեղեցին ալ իր բազմերախտ Հայրապետի ջանքերով իր դարերու փրկարար ռաւաքելութիւնը վերապրիլ կ'ուզէ հոգևոր և բարոյական անդաստաններուն մէջ։

Ն. Ս. Օծութեան սիրտը յատկապէս կը փափաքի որ իր նորահաստատ այդ տօնին անխափան երգովի «էլ Միածինն ի Հօրէ» շարականը։ Յատկապէս կ'ընդգծէ այդ փափաքը ոչ միայն անոր համար որ անոր մէջ խտացած է իր կոնդակին եզին այլ որովհետև կը հաւատայ թէ երկինքէն թափուած այդ անգին ավունքներու շարանին մէջ ցոլացած կը տեսնուին և կը զգացուին Հայութեան հարստութեան զոհարները, զոհարները հոգւոյն, սրտին և մտքին։ անոր մէջ կը շողողայ իմաստը իր կեանքին, շինարար կեանքին։ Գեկայք շինեցուք օուրը զիտրան լուսոյ, քանզի ի սմո ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի։

Այս հրեշտակային երգէն ճառագայթող սիրոյ և միանալանութեան, համերաշխութեան և համագործակցութեան ներդաշնակ ուխտերով արժանաւորապէս պիտի կրնանք երգել Քրիստոսութեամբ վերին քո զօրաց միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայցա։

ԿԻՒԲԵՂ Բ.

ՊԱՏՐԻԱՐԺ ԾՐՈՒՍԱԼԷՄԻ